Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ռ. Մ. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՈԼԻԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Մարդկային հասարակության պատմությունն իր կայուն հունի մեջ մտավ միայն այն ժամանակ, երբ Հին Արևելքի առավել զարգացած ցեղերն ու ցեղախմբերը Թևակոխեցին վաղ երկրագործական-անասնապահական արտադրող տնտեսության ասպարեզը և դրանով իսկ համակողմանի նախադրյալներ ստեղծեցին ժամանակակից քաղաքակրթության զարգացման համար։ Տնտեսական հեղափոխության այդ բախտորոշ պրոցեսը՝ Արևելքի երկրագործ-անասնապահ ցեղերի անջատումը Եվրոպայի որսորդ-հավաքիչների ընդհանուր զանգվածից, անցումը դեպի գիտակցված երկրագործությունն ու անասնապահությունը, արտադրող տնտեսության հնագույն ձևերի կազմավորումը, ավարտվում է մ. թ. ա. 6—4-րդ հազարամյակների միջոցին, Ասիայի ընդարձակ տարածություններում՝ Միջերկրականի արևելյան ափից մինչև Կարակումի ավազուտները, և գիտության կողմից դիտվում իբրև նախնադարյան համայնական հասարակության արտադրողական ուժերի զարգացման մի վիթխարի թռիչք[1]։

Պատմական այս կարևորագույն պրոցեսի խորը մասնագիտական ուսումնասիրության առաջնությունն ու պատիվը պատկանում է հնագետներին, որոնց բազմաթիվ աշխատություններում ապացուցված է, որ վաղագույն երկրագործական-անասնապահական կուլտուրաների կազմավորումը տեղի է ունեցել Ասիայի մերձարևադարձային կիսաանապատային մարզերում, ինչպես և առատ տեղումներով ու բուսականությամբ աչքի ընկնող լեռնային շրջաններում։ Խոշոր կաթնասունների հոտերի բացակայությունը և հացաբույսերի վայրի տեսակների ու պտղատու ծառերի առատությունը լեռներում հիմք են դառնում մասսայական հավաքչության և ապա երկրագործության զարգացման համար։ Ըստ այդմ, նշված շրջանների էկոլոգիական առանձնահատկություններն իրենց ուրույն կնիքն են դնում հնագույն երկրագործական մշակույթների արտաքին ընդհանուր կերպարի վրա, որոնք բոլորն էլ բնորոշվում են իբրև պրիմիտիվ ոռոգում, «կավե» ճարտարապետություն և խեցեղենի հոժկու արտադրություն ունեցող նստակյաց կուլտուրաներ։

Առաջավոր ասիական օյկումենային շրջանակներում, նոր՝ երկրագործական տնտեսության կազմավորումը պոլիցենտրիկ բնույթ էր կրում։ Ապացուցված է, որ վաղ երկրագործական-անասնապահական առաջին կուլտուրաների առանձին խոշոր օջախներ հանդես են գալիս Միջերկրականի արևելյան ափերին[2], Փոքր Ասիայի հարավ-արևմտյան շրջաններում, Տիգրիս ու Եփրատ գե-

---

[1] Տե՛ս Г. Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956, էջ 167—258, ինչպես նաև В. М. Массон, Средняя Азия и Древний Восток, М., 1964, էջ 65—77։

[2] R. J. Braidwood and L. S. Braidwood, Excavations in the Plain of Antioch, 1 OJP, v. LXI, Chicago, 1960, ինչպես նաև П. П. Ефименко, Неолитический Мерсин, СА, 1, 1959, էջ 241—279։

տերի վերին հոսանքներում, Պարսկական սարահարթի հյուսիս-արևմտյան մարզերում և այլուր[3], որոնք աքցանի նման շրջափակում են Հայկական լեռնաշխարհը բոլոր կողմերից և, էապես չտարբերվելով վերջինից իրենց բնակլիմայական պայմաններով, էկոլոգիական առանձնահատկություններով, բնակչության էթնիկական կազմով որոշակի կուլտուր-պատմական աղերսների մեջ են եղել Հայաստանի հետ նախամարդու ժամանակներից սկսած։

Պատմական նմանօրինակ իրադրության մեջ առանձնակի կարևորություն է ստանում Հայաստանի վաղ երկրագործական-անասնապահական կուլտուրայի էնեոլիթյան և վաղ-բրոնզեդարյան փուլերի ուսումնասիրությունը, ոչ միայն բուն եկրի հասարակական-տնտեսական զարգացման մակարդակը որոշելու տեսակետից, այլև պատմական այն դերի, որով հանդես էին գալիս Հայկական բարձրավանդակի ցեղերը հին արևելյան ու կովկասյան քաղաքակրթության ասպարեզում։

Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերջին տասնամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհի ընդարձակ տարածության վրա՝ Պոնտոսից մինչև Անտիտավրոս ու հայկական Տավրոս, Եփրատից մինչև Քուռ և Արաքս գետերի հովիտներն ու Փոքր Կովկասի զագաթները, հայտնաբերվել ու մասամբ ուսումնասիրվել են պալեոլիթի և նեոլիթի, մետաղների, ուրարտական ու հայկական պետական կազմավորումների ժամանակաշրջաններին պատկանող տասնյակ հարյուրավոր հնագիտական իդենտիկ հուշարձաններ, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերին պլիոցենում և պլեյստոցենում ձևավորված Հայաստան աշխարհը պահպանում էր հարյուր հազարամյակների ընթացքում ոչ միայն բնակլիմայական պայմանների, կենդանական ու բուսական աշխարհի, այլ նաև նյութական արտադրության ու մշակութային կյանքի ուրույն միասնական կերպարն ու ընդհանրությունը։ Այս ուսումնասիրությունները Հայկական լեռնաշխարհը մեզ ներկայացնում են իբրև առաջավոր ասիական հնագույն քաղաքակրթության ինքնուրույն մարզ և ավանդոստ, որն անբակտելիորեն կապված էր հին Արևելքի հետ և իր հանգուցային աշխարհագրական դիրքով, բնական հարստություններով, բերրի գետահովիտներով, ալպյան մարգագետիններով ու նշանավոր լեռնանցքներով զգալի դեր էր կատարում մարդկային վաղ քաղաքակրթության զարգացման, նախամարդու տեղաշարժերի ու տարաբնակեցման, Եվրոպայի ու Ասիայի կուլտուրական ներթափանցումների ուղիներում։

Պակաս կարևոր չպետք է լիներ Հայաստանում բնակվող ցեղերի ու ցեղախմբերի կուլտուր-պատմական դերը մ. թ. ա. 5—3-րդ հազարամյակների վաղ երկրագործական մշակույթի զարգացման ասպարեզում։

Յավոք, Հայկական լեռնաշխարհի մշակույթի պատմության նշված շրջանը, կամ՝ ինչպես ընդունված է ասել էնեոլիթյան և վաղ բրոնզեդարյան փուլերը, տակավին վատ են ուսումնասիրված։ Մ. թ. ա. 5—3-րդ հազարամյակներին պատկանող հարյուրավոր բնակատեղիների ու դամբարանադաշտերի բազմահարուստ հնագիտական նյութերն առայժմ ի մի չեն բերված և ընդհանրացված։ Ավելին, պատմական Հայաստանի ողբերգական մասնատվածությունը քաղաքական տարբեր արեալների մեջ իր լիարյուն անդրադարձումն է գտել

[3] A. Perkins, The comparative archeology of early Mesopotamia, Chicago, 1960, էջ 31—45։

հնագիտական քարտեզների վրա։ Էնեոլիթյան և վաղ բրոնզեդարյան միասնական մշակույթի համահայաստանյան քարտեզը բաժանված է ժամանակակից պետությունների քաղաքական սահմանների միջև, որպես ի վերուստ եկող հավիտենական իրողություն, և Հայաստանի մշակույթի օրգանապես կապված իդենտիկ ծայրագավառները՝ օտար, երբեմն մոլի աղգայնական, իսկ ավելի հաճախ խարխափող ուսումնասիրողների կողմից դիտվում են մեկը մյուսից անկախ, որպես առանձին, այսպես կոչված «Կովկասյան» և «Արևելաանատոլիական», կամ «Արևելաանատոլիական և Անդրկովկասյան» տարբեր մշակույթների դրսևորումներ։ Նման «տեսակետները», ցավոք, տեղ են գտել նաև սովետական և սովետահայ հնագիտության մեջ։ Ստեղծվել է պատմա-աշխարհագրական, հնագիտական տերմինների ու հասկացությունների մի ահավոր շփոթ, որը մեծապես վնասում է պատմական իրողության հնարավոր ճշգրիտ մեկնաբանմանը։

Մինչդեռ, Հայկական լեռնաշխարհի սահմաններում այժմ հայտնի կամ մասամբ ուսումնասիրված մ. թ. ա. 5—4-րդ հազարամյակների հուշարձանների ամենանախնական ուսումնասիրությունն իսկ հնարավորություն է ընձեռում ոչ միայն բնակատեղիների նախնական դասակարգման, թվագրման, պատմագիտական մեկնաբանման, այլև այդ մշակույթի տարածման սահմանների, տեղային առանձնահատկությունների ու բնորոշ գծերի, ինչպես և հին արևելյան ընդհանրությունների բացահայտման, որոնք այնքան կարևոր են Հայաստանի այս շրջանի մշակույթի տեղն ու դերը պարզաբանելու տեսակետից։

Ներկա կոնսպեկտիվ շարադրության մեջ մենք կաշխատենք բացահայտել մ. թ. ա. 5-րդ հազարամյակի II կեսի և 4-րդ հազարամյակի պղնձեքարեդարյան մշակույթի մոտավոր էությունը։

Հուշարձանների քարտեզագրական ուսումնասիրությունը համոզում է մեզ, որ մ. թ. ա. 5—4-րդ հազարամյակների ընթացքում վաղ երկրագործ-անասնապահ ցեղերը բացի Արևելքի վերոհիշյալ մարզերից զբաղեցնում էին նաև Հայկական լեռնաշխարհի ողջ տերիտորիան ժամանակակից Մալաթիայի, Խարբերդի, Արգուվանի, Հեքիմհանի գավառներից, մինչև Վանի երկրագործական գոտին, Մշո, Կարնո[4] և Արարատյան դաշտերը, ինչպես և պատմական Արցախ նահանգի՝ մի զգալի մասը՝ ավելի քան 300000 քառակուսի կիլոմետր տարածություն։ Ընդգրկման այս հսկա արեալն ինքնին վկայում է, որ մենք գործ ունենք վաղ երկրագործական խոշոր և ինքնուրույն մի մշակույթի հետ։

Այսպես կոչված հասսունյան նեոլիթյան տիպի խեցեղենի առայժմ փոքրաթիվ հայտնագործությունները երկրի արևմտյան ծայրագավառներում, նեոլիթյան և էնեոլիթյան հաջորդական շերտագրություն ունեցող մի քանի առայժմ քիչ ուսումնասիրված և չհրատարակված, բնակատեղիների, ինչպես և մերսինյան անցումնային ժամանակաշրջանի (Մխլու թափա)[6] կուլտուրական շերտերի առկայությունը Արարատյան դաշտում, հիմք են տալիս պնդելու, որ աշխար-

---

[4] G. A. Burney, Eastern Anatolia in the chalcolitic and early bronze age, AS, V. VIII, *1958, էջ 157—161։ Ռ. Թորոսյան, Լչմիածինը 6000 տարվա բնակատեղի է, «Կոմունիզմի ալիք», 1 օգոստոսի, 1963 թ.։*

[5] А. А. Иессен, Кавказ и Древний Восток в IV—III тысячелетиях до н. э., КСИА, 1963, вып. 93, *էջ 3—14։*

[6] *Հաշվի են առնված Ռ. Թորոսյանի հավաքած նյութերը Թեղուտ և Մխլութափա բնակատեղիներից։*

հազրական այս ծավալուն միջավայրն ընդգրկող էնեոլիթյան ուրույն մշակույթն օրինաչափորեն ծակել է տեղական նեոլիթյան կուլտուրայի հիման վրա և կարգացել իր ներքին էական օրինաչափություններով։ Ըստ այդմ, չնայած արևելյան կուլտուրական կոնտակտների դրսևորմանը, Հայաստանի էնեոլիթյան նյութական արտադրության մեջ և տարբեր ծայրագավառների հնավայրերի տեղական, ցեղային, էթնիկ ու ժամանակագրական տարբերիչ երանգներին, հին արևելյան աղերսները հստակորեն դրսևորվում են իբրև ազդեցություններ և փոխազդեցություններ, իսկ բուն հայաստանյան հնավայրերի աղերսները որպես մեծ մշակութային ընդհանրություն, բնորոշ ֆիզիկա-աշխարհագրական և էթնիկական կոմպակտ միջավայրի համար։ Հին արևելքի և Հայաստանի նյութական արտադրության իրեղեն հուշարձաններն, այնուամենայնիվ, իրարից խիստ տարբերվում են արտաքին ձևերով և զարգացման ինքնուրույն տենդենցներով։

Հայաստանի նշված շրջանի նյութական կուլտուրայի ուսումնասիրության տեսակետից շատ կարևոր նշանակություն ունեցող Փոքր-Ասիայի հարավ-արևմտյան շրջանների (Չաթալ-Հույուք[7], Հաջիլար[8], Սաքչե-զյոզե[9]), Կիլիկիայի (Մերսին՝ Յումուք-թեփե[10]), Ասորիք-Պաղեստինի (Ռաս-Շամրա, Ջերել 1-ին, Թարարա-էլ-Համամ, Թախունա, Երիքոն[11]), Իրանի (Թեփե-Սիալք 3-րդ[12], Գեոյ-Թեփե[13], Պիչիլի-Թեփե[14]), Իրաքի (Հասսունա, Թել-Հալաֆ, Սամարրա, Թեփե-Գավրա[15] և այլն) բազմակողմանիորեն Հայաստանի հետ կապված հուշարձանների խմբերից և ոչ մեկը իրենց արտաքին ձևով չեն կրկնում հայաստանյան հուշարձանները, թեև իրենցից ներկայացնում են կուլտուր-տնտեսական միևնույն մակարդակի տարբեր դրսևորումներ։

Բնորոշ է, օրինակ, որ Հայկական լեռնաշխարհի սարահարթերի ու դաշտավայրերի հնավայրերում հայտնաբերված հարյուր հազարավոր կավե անոթների բեկորներն իրենց արտաքին տեսքով ու պատրաստման տեխնիկայի առանձնահատկություններով ներկայացնում են աշխարհագրական ներփակ սահմաններին բնորոշ խեցեգործական արհեստի զարգացման մի որոշակի աստիճան։ Այսպես, Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում (Խարբերդ-Մալաթիա, Հինձոր, Հեբիմհան) մասսայական արտադրության նախշազարդ և աննախշ տեղական կերամիկան ունի բաց կայծքարի գույնի, կոպիտ, անհարթ ոչ լրիվ թրծած խեցի և կարմիրով կատարած նախշազարդեր։ Եփրատից արևմուտք և Մալաթիայից հյուսիս՝ Զիլբիստանում նույն խեցեղենի մեջ նկատվում է գորշ փայլեցրած նյութի գերակշռությունը, ինչպես և Շամուա գույնի արտադրանքի առկայությունը, որը համադրվում է Մարաշի հարթավայրի խեցեղենի հետ։ Արևմտահայաստանյան խեցեղենի այս տեսակների տարա-

---

[7] J. Mellaart. Excavations at Çatal Hüyük, AS, v. XII, 1962, էջ 41—110, v. XIII, էջ 43—103, vol. XIV, էջ 39—120։

[8] Նույնի, Excavations at Haçilar, AS, vv. VIII—IX, էջեր 127—153, 51—65, 67—104, 39—75։

[9] K. Bittel, Prehistorische Forschungen in Klein Asien, Istanbul, 1936, էջ 10—12։

[10] J. Garstang, Prehistoric Mersin, Oxford, 1953.

[11] Ռ. Ի. և Լ. Ս. Բրայդվադներ, նշվ. աշխ.։

[12] R. Ghirshman, Fouilles de Sialk, v. I, Paris, 1938.

[13] T. Burton-Brown, Excavations in Azarbaijan, London, 1948.

[14] R. H. Dyson and T. C. Young, Pisdeli Tepe, „Antiquiti", 1960, № 133, էջ 19—28։

[15] Ա. Պերկին, նշվ. աշխ.։

ծումը Արևելքում շարունակվում է մինչև Արծն-Կարնո շրջանը, որն առայժմ լավ ուսումնասիրված չէ[16]։

Արևելահայաստանի, նույն ժամանակաշրջանին պատկանող, մասսայական խեցեղենի մեջ բաց գույնի ամանեղենի հետ մեկտեղ միահավասար հանդես է գալիս նաև կարմիր կամ վարդագույն մակերեսով արտադրանքը, իսկ նախշազարդերի մեջ, բացի կարմիրից, նաև սևը կամ մուգ շագանակագույնը[17]։

Որպեսզի այս համագրություններն ավելի որոշակի երևան, բերենք մի երկու կոնկրետ օրինակ տեղական էնեոլիթյան մշակույթի տարբեր օջախներից։ Մ. թ. ա. 5—4-րդ հազարամյակների ամենաբնորոշ հուշարձաններից մեկը Վանում պեղված Շամիրամալթի նշանավոր բնակատեղին է, որն իր երեք շերտերում համապատասխանորեն ընդգրկում է վաղ երկրագործական կուլտուրայի զարգացման հաջորդական երեք փուլերին վերաբերող բազմաթիվ հնագիտական առարկաներ, մանավանդ բնորոշ խեցեղեն, որը մի տեսակ կսպող օղակ է հանդիսանում, մի կողմից Միջագետքի, Արևմտյան և Արևելյան Հայաստանի, մյուս կողմից՝ պարսկական սարահարթի ժամանակագրորեն երվիներանգ հուշարձանների միջև[18]։ Շամիրամալթիի ստորին շերտին (3-րդ) բնորոշ հիանալի փայլեցված ու գունազարդված խեցեղենը ստույգ զուգահեռներ ունի Արարատյան դաշտի կենտրոնում ընկած Թեղուտ և նրա ծայր արևելյան մասում գտնվող Քյուլ-Թափա (Նախիջևանի մոտ) բնակատեղիներից գտնված խեցեղենի հետ։ Նրա երկրորդ շերտի չգունազարդված կերամիկան և առաջին շերտի հարդախառն խեցեղենը բնորոշ է Հայկական լեռնաշխարհի բոլոր բնակատեղիների, Աղստևի հովտի, Մուղան-Ղարաբաղի, հյուսիս-արևմտյան Իրանի հուշարձանների համար։

Հենվելով խեցեղենի զարդանախշերի նմանության վրա, ուսումնասիրողների մի զգալի մասը պնդում է, որ ալիքավոր օրնամենտով հարդախառն կերամիկան ծագում է Իրանի Թեփե-Սիալք 3-րդ կամ Թեփե-Հիսար 1-ին կուլտուրաներից։ Այստեղից եզրակացնում են, որ Շամիրամալթիի ստորին (3-րդ) շերտում շոշափելի ձևով արտահայտված միջագետքյան կոնտակտներն ավելի ուշ փոխարինվում են իրանական ազդեցություններով և հյուսիս իրանական կուլտուրական զոնայի հետագա տարածմամբ Հայկական լեռնաշխարհի գրեթե ողջ տերիտորիայի վրա մ. թ. ա. 4-րդ հազարամյակում[19]։ Այս տեսակետը լուրջ քննադատության չի դիմանում և հատուկ քննարկումից հետո պետք է վերանայվի։ Խնդիրն այն է, որ Հայկական լեռնաշխարհի տարբեր ծայրագավառների խեցեղենի արտադրության արգասիքները, բնականորեն, արտացոլում են արտաքին՝ հին արևելյան աղերսներ։ Հայաստանի արևմտյան մարզերում և նույնիսկ Արարատյան դաշտում հանդիպում են հյուսիս-միջագետքյան՝ հասսունա-հալաֆյան, օբեյդյան և կիլիկյան բնորոշ նմուշներ, իսկ Արևելահայաստանում՝

---

16 Չ. Բարնեյ, նշվ. աշխ.։

17 Հ. Մարտիրոսյան, Հնագիտական մեծ նորություն, «Սովետական Հայաստան», 11 հուլիս, 1965 (№ 162), ինչպես նաև Ռ. Թորոսյան, Էջմիածին 6000 տարվա բնակատեղի է, «Կոմունիզմի ուղիով», 1 օգոստոսի, 1965 (№ 90—185)։

18 Շամիրամալթի մասին տես A. Jenny, Schamiramalti, Prehistorische Zeitschrift, XIX, № 314, Berlin, 1928, Ա. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1-ին, էջ 134—136, նկ. 41—45, E. B. Reilly, Tilki Tepe...., Türk Tarih arkeologya, IV, 1940.

19 Վերոհիշյալ աշխատություններում նման տեսակետներ են արծարծում Պերկինսը, Բարնեյը, Ինսսենը և շատ ուրիշներ։

ինչպես միջագետքյան, այնպես էլ իրանական նմուշներ, որոնք կուլտուրական աղերսների լավագույն ցուցանիշներ են, բայց ոչ մի դեպքում իբրև Հայաստանի նյութական արտադրության հիմնական և բնորոշ արգասիքներ չեն կարող դիտվել։

Հայկական լեռնաշխարհի ամենատարբեր ծայրագավառների հուշարձանների մանրակրկիտ ուսումնասիրությամբ մենք կարող ենք մեծ ընդհանրություններ նշել նյութական արտադրության բոլոր ասպարեզներում, ինչպես և կենցաղային հուշարձանների, մասնավորապես բնակատեղիների տիպերի ու բնակարանաշինարարության մեջ, որոնք յուրաքանչյուր էթնիկ շրջանի կամ կուլտուրական միասնության բնորոշ տարրերն են կազմում։

Առանձնապես լավ են ուսումնասիրված Արարատյան դաշտավայրի ու պատմական Արցախ գավառի[20] բնակատեղիները, որոնք տեղադրված են փոքր ինչ բարձրադիր բլուրների վրա, գրավում են 1—2 հեկտար տարածություն, հաճախ պարսպապատված չեն, բաղկացած են կլոր հատակագիծ ունեցող առանձին հյուղակներից և իրենցից ներկայացնում են տոհմական բնակավայրեր։ Կացարաններն աղքատիկ ու անպաճույճ են, ունեն հարդախառն հում աղյուսից շարած պատեր, կավածեփ, երբեմն ներկած հատակ, տնտեսական և պաշտամունքային օջախներ։ Սրանք ունեն փոքր տրամագիծ, կիսագետնափոր են։ Շակի մասում կացարանի կողքին զետեղված են հացահատիկի կլոր աղյուսաշեն ամբարներ շատ փոքր տրամագծով։ Մ. թ. ա. 4-րդ հազարամյակի կացարանի այս տիպը հայտնի է Թեղուտի[21], Նախիջևանի Քյուլ-թեփեի[22], Աղստև գետի հովտի երեք բնակավայրերից[23] և բնորոշ ողջ Հայաստանի համար, որտեղ արդեն 3-րդ հազարամյակում մենք տեսնում ենք այս հիմքի վրա աճած բնակարանաշինության զարգացած պատկեր։ Հայաստանի սահմաններից դուրս Հյուսիսային Միջագետքի և արևելամիջերկրական շրջանների 6—4-րդ հազարամյակների բազմաթիվ բնակատեղիներում (Հասսունա, Թեփե-Դավրա, Թել-Արփաչիյա, երիքոն և այլն) թեև հանդիպում ենք կլոր կացարանների, սակայն սրանք բոլորն էլ, բացառությամբ երիքոնի կացարանների, հանդես են գալիս հաճախ քառանկյուն շինությունների զուգակից կոմպլեքսների մեջ և, ըստ երևույթին, ներկայացնում են քաղաքացիական շինարարության փոքր-ինչ ավելի զարգացած տիպեր։ Նույն շրջանի այլ բնակատեղիներում կացարանների հսկա կոմպլեքսները (Չաթալ-Հույուք, Հասսունա և այլն) բաղկացած են պարզապես նեոլիթյան հասակ ունեցող քառանկյունի շինություններից։ Հայաստանում ուսումնասիրված այս բնակատեղիներն այժմ բավականաչափ հարուստ նյութ են ընձեռում ժամանակի արտադրողական ուժերի զարգացման, տնտեսության հիմնական ճյուղերի՝ երկրագործության ու անասնապահության, նոր զարգացող արհեստների, երկրի արտաքին կապերի վերաբերյալ։

---

20 А. А. Иессен, Из исторического прошлого Мильско-Карабахской степи, МИА, 128, М.—Л., 1965, էջ 10—35։

21 Տե՛ս Հ. Մարտիրոսյանի և Ռ. Թորոսյանի վերը հիշատակված հոդվածները։

22 О. А. Абибуллаев, Некоторые итоги изучения холма Кюль-Тепе, СА, 1963, № 3, էջ 157—167։

23 И. Г. Нариманов, Г. С. Исмаилов, Ахстафачайское поселение близ г. Казах, СА, № 4, 1962, էջ 148—156։

Հետաքրքիր է, որ Հայաստանի էնեոլիթյան բնակատեղիները նշված են ալլուվյալ հարթավայրերում՝ գետերի ու լեռնային գետակների, կամ նրանց շորացած հունների ափերին, այն տարածություններում, ուր հնուց ի վեր աճում էին վայրի հացաբույսերի պանպան տեսակներ, և որտեղ ինտենսիվ զարգացում էր ապրում հավաքչությունը։ Բնակավայրերի խտությունը լիմանային ու պելտային շրջաններում ցույց է տալիս, որ հին երկրագործը լայնորեն յուրացրել էր ցանքատարածությունների համար պիտանի շատ շրջաններ և քաջ ծանոթ էր պրիմիտիվ ոռոգման եղանակներին։ Ըստ երևույթին, էնեոլիթյան, ինչպես և վաղ բրոնզեդարյան երկրագործության համար բնորոշ էին հացաբույսերի խառը ցանքսերը։ Ցորենն ու գարին տեղաբնիկների հիմնական սննդամթերքներն էին։ Թեղուտի կացարաններում հրամ աղյուսների հարգի խառնուրդի մեջ հայտնաբերվել են մեծ քանակությամբ ցորենի ու գարու հատիկների ու ցողունների մնացորդներ, որոնց մեծ քանակը զարմանք է պատճառում[24]։

Հնարավոր է, որ Հայաստանի տեղաբնիկը ծանոթ էր և կուլտուրական այլ բույսերի մշակմանը։ Իկոնիայի Ջաթալ-Հույուք և Հաջիլար նեոլիթյան և էնեոլիթյան հայտնի բնակատեղիներում (մ. թ. ա. 7—5-րդ հազ.) անմիջապես Արևմտահայաստանի հարևանությամբ, բացի ցորենի ու գարու ամբարված մեծ պաշարներից, հայտնի են նաև էմմերի, ոսպի և այլ բույսերի մնացորդներ[25]։

Բացի հացաբույսերի մնացորդներից Թեղուտի, Նախիջևանի Քյուլ-թեփեի, Շամիրամալթիի, Ադստևի բնակավայրերում հայտնաբերվել են ցանքսի, բերքահավաքի, երկրագործական մթերքների վերամշակման հարյուրավոր գործիքներ, որոնցով բնորոշվում է ժամանակի վաղ երկրագործական տնտեսության բնույթն ու մակարդակը։

Սրանք իրենցից ներկայացնում են ոսկրե հիանալի սրածայրեր, խոշոր անասունների սնամեջ ոսկորներից ու քարից պատրաստած բրիշներ, վանակատե ու կայծքարե դանականման կտրող շեղբիկներ, ոսկրե ու փայտյա պահանգներով մանգաղների ներդիրներ՝ շմշակված աշխատանքային սայրերով, բազալտե փոքրիկ աղորիքներ, սանդերի ու սանդակոթերի բազմաթիվ նմուշներ. որոնք անհերքելիորեն ապացուցում են, որ էնեոլիթյան ժամանակաշրջանի բրիշային երկրագործությունը տեղաբնիկների տնտեսության հիմնական ճյուղերից մեկն էր։

Վերը հիշատակած դանականման շեղբերի, մանգաղների ներդիրների, ոսկրե բրիշների, սանդերի, վարսանդների և բազմաթիվ գործիքների ստույգ անալոգները իրանական սարահարթի Պիջիլի-թեփե[26], միջագետքյան Հալաֆի[27], Հասսունայի[28], ինչպես և փոքրասիական Ջաթալ-Հույուք[29] և Հաջիլար[30] հնավայրերի վերին շերտերում, աներկբայորեն մատնանշում են այն հանգամանքը, որ Հայաստանի էնեոլիթյան շրջանի երկրագործությունը մ. թ. ա. 5—4-րդ հազարամյակներում գտնվում էր մոտավորապես ասիական առաջավոր շրջանների տնտեսական մակարդակի վրա։

---

24 Թեղուտի հատիկները մասնագիտական ուսումնասիրության են ենթարկվում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Վ. Հ. Գուլբանյանի կողմից։

25 Տե՛ս Վ. Մ. Մասսոն, նշվ. աշխ., էջ 70—71։

26 R. N. Dyson and T. C. Young, նշվ. աշխ., տախտակ 3-րդ։

27 Von Oppenhelm, Der Tell-Halaf, Berlin, 1948, նկ. 18։

28 S. Lloyd, F. Safar, Tell-Hassuna, JNES, T. IV, № 1, 1945, նկ. 26։

29 AS, XIV, նկ. 4—10, 6—7։

30 AS. VIII—XI.

Բացի աշխատանքային գործիքներից, էնեոլիթյան երկրագործության մեջ զգալի դեր էին կատարում նաև բանող անասունները՝ հատկապես կալսման ու փոխադրման աշխատանքների ժամանակ։ Անասնապահությունն էնեոլիթյան Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղերից մեկն էր։ Վերը հիշատակած բնակավայրերում հանդիպում են ցուլերի (կովերի), այծերի, ոչխարների, խոզերի ոսկորների մնացորդներ։ Այս կենդանիները օգտագործվել են իբրև բանող ուժ և ապահովել մսի, կաթնամթերքների, կաշեգործության, մանածագործության, ոսկրագործության աճող պահանջները։

Հասկանալի է, որ վերը թվարկված արհեստների, ինչպես և քարագործության ու խեցեգործության զարգացումը պայմանավորված էր տնտեսության հիմնական ճյուղերի՝ երկրագործության ու անասնապահության հարաճուն պահանջներով։

Չափազանցություն չի լինի, եթե նշենք, որ տնտեսության հիմնական ճյուղերի, որսորդության ու ձկնորսության կարիքներով է բացատրվում նաև մետաղամշակության ծագումն ու զարգացումը։ Տնտեսության ու կենցաղի շատ ասպարեզներում լայնորեն կիրառվող քարե գործիքներն, այնուամենայնիվ, դիմացկուն, երկարակյաց չէին, նրանց պատրաստումը շատ ժամանակ և հնարավորություններ էր պահանջում։

Մինչդեռ մետաղամշակությունը, արհեստներից ամենակարևորն ու առաջադիմականը, մ. թ. ա. 6—4-րդ հազարամյակների ընթացքում հաստատուն պրոգրես էր ապրում։ Շամիրամալթիի[31], Թեղուտի[32], Քյուլ-թեփեի[33] բնակավայրերից հայտնի են մետաղե հերուններ, ասեղներ, շեղբեր, կարթեր և այլ գործիքներ ու ձուլման կաղապարներ, որոնք դեռևս կատարելագործված չեն, բայց պատրաստված են կոփելու և ձուլելու եղանակներով, մկնդեղի խառնուրդի զգալի տոկոսով։ Այս իրերի ստույգ զուգահեռների առկայությունը իրանական (Գեոյ-թեփե[34], Թեփե-Սիալք[35]։ Թեփե-Հիսար[36]), միջագետքյան (Թել-Հալյավ[37]), Փոքր-Ասիական (Զաթալ-Հույուք[38], Հաջիլար[39]) և կիլիկյան (Մերսին 25-րդ) մ. թ. ա. 6—4-րդ հազ. հուշարձաններում մատնանշում է, որ ամբողջ Առաջավոր Ասիան այս շրջանում թևակոխել էր մետաղի դարաշրջանը և, որ մետաղամշակության զարգացումը Հայաստանում համընդհանուր պրոցեսի օրգանական մասերից մեկն էր։ Ի դեպ, մի խումբ հնագետ-արևելագետների կարծիքով, Փոքր Ասիան և Հայկական բարձրավանդակը մետաղահանության և մետաղամշակման ամենանախնական կենտրոններն էին, որտեղից մետաղարդյունաբերության արտադրանքը ներթափանցում էր Ասորիք, Պաղեստին և Հյուսիսային Միջագետք[40]։ Կարելի է առանց վարանման ենթադրել, որ Հայաստանի մետաղամշակության ազդեցությունից զերծ չէին կարող մնալ Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի մարզերը։ Չէ՞ որ Մուղան-Ղարաբաղի

31 Խ. Սամվելյան, նույն տեղում։
32 Հ. Մարտիրոսյան, Ռ. Թորոսյան, նշվ. աշխ.։
33 Θ. Ա. Արիրուլա, նշվ. աշխ., էջ 157։
34 Տ. Բարտոն-Բրոուն, նշվ. աշխ., էջ 179—180։
35 Ռ. Գիրշման, նշվ. աշխ., հ. 1, տախտ. 23-րդ, 34-րդ։
36 E. F. Schmidt, Tepe-Hissar. Excavations, 1933, v. XXIII, № 4.
37 Օպենհեյմ, նշվ. աշխ., հ. 1, 1943, նկ. 48։
38 Մելլաարտ, նշվ. աշխ.։
39 Նույնի, նշվ. աշխ.։
40 Ա. Ինսան, նշվ. աշխ., էջ 6 և ծանոթագրություններ։

տափաստանում և նույնիսկ հեռավոր Դաղստանի լեռնային ամենաբարձր զոնաներում մենք տեսնում ենք 4-րդ հազարամյակի խեցեղենի մասսայական ներթափանցում հարավային ուղիներից։

Մետաղահանության-մետաղաձուլության ծաղումն ու հաստատումը, տընտեսության ճյուղերի և հասարակական կառուցվածքի որոշակի առաջադիմական տեղաշարժերն ու, մյուս կողմից, ուշ նեոլիթյան ավանդությունների պահպանումը նյութական արտադրության մի քանի պատասխանատու ճյուղերում լիովին իրավունք են տալիս մեզ մ. թ. ա. 5-րդ հազարամյակի 2-րդ կեսի և 4-րդ հազարամյակի վաղ երկրագործական մշակույթը անվանել էնեոլիթյան պղնձե քարեդարյան, մանավանդ, որ Առաջավոր Ասիայի տնտեսական ոլորտներում մետաղի արտադրական օգտագործումը հայտնի էր տակավին մ. թ. ա. 6-րդ հազարամյակից ոչ ուշ (Չաթալ-Հույուք, Հաջիլար, մ. թ. ա. 6500—5000 թթ.)[41]։

Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի նյութական արտադրության այլ և այլ ճյուղերի արգասիքների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխարհագրական այս ծավալուն միջավայրում, տարորոշվող մշակութային մեծ օջախների տնտեսական զարգացման տենդենցներն, ուղիներն ու մակարդակը ընդհանուր են, թեև, ինչպես վերը նշեցինք, այդ մշակույթները որոշակիորեն սահմանազատվում են իրարից արտաքին ձևով, ներքին որոշ օրինաչափություններով, ժամանակագրությամբ, կենցաղային և այլ առանձնահատկություններով։

Ուսումնասիրողները պնդում են, որ միջագետքյան տեքստերում հիշատակվող խուրրի-սուբարիների ցեղերը մ. թ. ա. 4—3-րդ հազարամյակներում զբաղեցնում էին Փոքր Ասիան, Հայաստանն ու Հյուսիսային Միջագետքը, քանի որ խուրրիտական տեղանուններն, անձնանուններն ու բառերը տարածված էին նշված երկրներին վերաբերող գրավոր աղբյուրներում[42]։ Ուրեմն առաջավոր ասիական և հայաստանյան մշակույթների ընդհանրության հիմքում ընկած էր այս երկրներն զբաղեցնող խուրրիտական ցեղերի ու ցեղախմբերի էթնիկական միասնությունը, որոնց առանձին խմբերը համապատասխանորեն զբաղեցնում էին Հայկական լեռնաշխարհի, Փոքր Ասիայի արևմտյան և Միջագետքի հյուսիսային որոշակի աշխարհագրական շրջաններ։ Հենց այս մարզերի ֆիզիկա-աշխարհագրական, բնակլիմայական, հանքային հարստություններով էլ պետք է բացատրել նրանց մշակույթների արտաքին ու ներքին առանձնահատկությունները, ժամանակագրական, երբեմն զգալի տարբերությունները։ Մ. թ. ա. 4—1-ին հազարամյակներում Հայկական լեռնաշխարհի տերիտորիայում առանձնացած ու բյուրեղացած խուրրիտական այդ ցեղերը պատմական թատերաբեմից դուրս են գալիս միայն հայկական ասիմիլյացիայի շնորհիվ։ Մարդաբանական հետազոտություններն էլ ցույց են տալիս, որ խուրրի-սուբարական այս ցեղերի ֆիզիկական տիպը շարունակում է ապրել Փոքր Ասիայի ժամանակակից որոշ ժողովուրդների և գերազանցապես հայերի մեջ, որոնք հոմոգեն են և խստորեն սահմանազատվում են այլ ցեղախմբերից՝ մարդաբանական տիպով, գանկերի բրախիցեֆալ ձևով և արծվաքիթ դեմքով[43]։

---

[41] „Anatolian Studies", v. XIV, 1964, էջ 39—41։

[42] G. Contenau, Les Tablettes de Kerkouk...., 1926, 2-րդ, էջ 127։

[43] Luschan, Rasen und Fölker, էջ 76, E. Forrer, Realexicon der Assyrologie. Bd I, I—IV, 1928—1930, Ed. Meyer, Reich und Kultur der Chetiter, էջ 12։

Ինչպես դրան, Հայաստանի վաղ երկրագործական մշակույթի տարածման սահմանները փոփոխությունների էին ենթարկվում՝ գերազանցապես երկրի ծայրագավառներում այլ ցեղերի քաղաքական գերիշխանության, միգրացիաների, տեղաշարժերի, կուլտուրական ներթափանցումների և պատմական այլ հանգամանքների շնորհիվ։ Ապացուցված է, օրինակ, որ Վանի երկրագործական օազիսում մ. թ. ա. 5-րդ հազարամյակում գերիշխում էր հյուսիս-միջագետքյան հալաֆյան մշակույթը, կամ, ինչպես հնագետներն են ասում, այդ շրջանը մտնում էր հալաֆյան կուլտուրայի արեալների մեջ։

Հալաֆյան մշակույթի բնորոշ հուշարձաններից է Վանում պեղված նշանավոր Շամիրամալթի բնակատեղիի ստորին (3-րդ) շերտը, իր նրբախեցի փայլուն զարդանախշ ամանեղենով, որի թվագրությունը 5-րդ հազարամյակի 2-րդ կեսից այս կողմ չի անցնում։ Սրա միջին (2-րդ) և վերին (1-ին) շերտերի մ. թ. ա. 4-րդ հազարամյակի հնագիտական նյութերն ամբողջությամբ կապվում են Հայկական լեռնաշխարհին բնորոշ այլ հուշարձանների հետ, որոնք, հաճախ, պարունակում են նաև մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կուլտուրական նստվածքներ։

Ահա այս տիպի բազմաշերտ հուշարձանները Հայաստանում (Շամիրամալթի, Քյուլ-թափա և այլն) և նրանց համադրությունները Առաջավոր Ասիայում, թվագրումների լայն հնարավորություններ են տալիս։ Քյուլ-թափա բնակավայրի 4-րդ հազարամյակին պատկանող ստորին (8,3 մ.) շերտի հնագիտական նյութերի ուսումնասիրությունն ու նրանց ստույգ զուգահեռները ցույց տվին, որ այդ շերտը համապատասխանում է Կապուտան լճի Գեոյ-թեփե բնակավայրի «Ս» շերտին (ուշ օբեյդյան ժամանակաշրջանի վերջ, մ. թ. ա. 3250—3150 թթ.), ինչպես նաև Պիջիլի-թեփե բնակավայրի և Թեփե-Դավրա 19—17 շերտերի ժամանակաշրջանին, որոնք հյուսիս-օբեյդյան նյութերի համադրություններով հասցվում են մինչև մ. թ. ա. 3500±160 և 3446±325 թվականներին։ Նկատի ունենալով Քյուլ-թեփե ստորին շերտի զգալի հզորությունը, ուսումնասիրողները արդարացիորեն պնդում են, որ նրա ներքին խավերի թվագրությունն ընկնում է 4-րդ հազարամյակի 1-ին կեսի մեջ։ Այս տվյալները հաստատվում են Քյուլ-թեփեի և Կվացխելեբիի նյութերի ռադիոածխածնային անալիզով, ինչպես և Արարատյան դաշտավայրի հուշարձանների պատմա-համեմատական ուսումնասիրությամբ։ Բերված հուշարձաններն ընդգրկում են ժամանակագրական մի հսկա հատված՝ 5-րդ հազ. 2-րդ կեսից մինչև 4-րդ հազարամյակի վերջը։

Ահա այս շրջանումն է, որ Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի ցեղերն ու ցեղախմբերը հասան սոցիալ-տնտեսական զարգացման շատ բարձր մակարդակի։ Սրանց է պատկանում մետաղաձուլության, խեցեգործության, անիվի, բրուտագործական դուրգնի, կուլտուրական հացաբույսերի մշակման և մի ամբողջ շարք այլ կարևորագույն հայտնագործությունների պատիվն ու առաջնությունը, հայտնագործություններ, որոնք մեկընդմիշտ ներմուծվեցին համամարդկային կուլտուրայի դանձարանը։ Անգլիական խոշոր արևելագետ-հնագնտ Գ. Չայլդի խոսքերով՝ այս ցեղերի ստեղծած մշակույթն իր պատկառելի հնությամբ և արժանիքներով կարող է մրցել Միջագետքի ու Նեղոսի հովտի հնագույն կուլտուրաների հետ։



Մ. թ. ա. V—IV հազարամյակների հատարակ ու գունազարդ խեցեղենի, ոսկրե և քարե առարկաների նմուշներ Թեղուտի բնակավայրի պեղումներից։